

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

ՈՒՍՈՒՑՈՒԱԾ

ՅԻՍՈՒՍԻ ԱՇԱԿԵՐՏՈՂՆԵՐՈՒՆ

THE LORD'S PRAYER

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ

ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ

1992

Զ Օ Ն

*Ռոդիական անարատ սիրոյ ոգեկոչումով
կը նուիրեմ այս գրութիւնը
զիս անմերապափորէն սիրոզ և ինծի
թիկունք կանգնած աներօրս*

Տոգթ. Արտաշէս Գիւտեանի

իր արիութեան համար որ ցոլքն էր
Աստուծոյ սիրոյն.

Նաեւ

Համակ նուիրում հանդիսացած զոբանչմօրս՝

Հայկունիի Գիւտեանի
(Ծնեալ Խաչիկեան)

Ալպէո Նորատունկեան

Մ Ո Ւ Տ Ք

Մեկնաբանութեան փորձ մը Տէրունական Աղօթքին, որ ամենասքանչ մեղեդին եղած է հազարաւոր և միլիոնաւոր հաւատացեալներու սալով անոնց հոգեկան սլացք դէպի այն աստուածային Մոցը ուր կայ՝

**Յոյս, Մխիթարութիւն, Բժշկութիւն և
Կեանք:**

Ա. Արատունկեան

Առաջին տպագրութիւն՝ Յուլիս 17, 1992
Երկրորդ տպագրութիւն՝ Ապրիլ 17, 1993
Երրորդ տպագրութիւն՝----- 1997

“ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ”

Ի՞նչ կը նշանակէ **ԱՂՕԹՔ** կամ **ԱՂՕԹԵԼ**:

Մարդ արարած, պատմութեան սկիզբէն, յայտնուած է որպէս բանաւոր էակ և աղօթո՞ղ արարած, հոգ չէ թէ ինչի՞ համար կամ որո՞ւ ուղղուած: Ձկայ մարդկային ֆաղափակրթութիւն կամ մշակոյթ, որքան ալ նախնական ըլլայ ան, որուն մէջ մարդ աղօթած չ’ըլլայ:

Աղօթքը այն վիճակն է կամ արարքը ուր մարդ անձնատուր կ’ըլլայ կամ ինքզինքը կը յանձնէ Գերագոյն Ջօրութեան, այսինքն՝ աստուածային Ամենակալութեան որուն ենթարկուելով կ’ուզէ հասնիլ Բարիին կամ խուսափիլ ստոյգ չարէն:

Աղօթքը, որ մաս կը կազմէ աստուածապաշտութեան, կը զանազանուի պաշտամունքէ սա կէտին մէջ, որ աղօթքը իր մէջ աղերս և խնդրանք կը պարունակէ: Աղօթքին բնոյթը անհասկնալի պիտի մնար մարդ արարածին՝ եթէ Աստուած անպատասխանի թողուր աղօթողին խնդրանքները:

Աստուծոյ աղօթել՝ միայն լեզուաբանական միջոցով կամ բաներու արտասանութեամբ չէ որ կը կատարուի: Ի՞նչու. որովհետեւ, շատ անգամ, մեր միտքը ուրիշ տեղ եղած կ’ըլլայ ու մեր արտասանած բաները՝ ուրիշ բաներ: Աղօթքը աւելի դիրք մըն է, կեցուածք մը ոչ թէ միայն մարմնական, այլ մանաւանդ հոգեկան և իմացական: Երբ մեր էութեան ամբողջականութիւնը, մարմնական, հոգեկան և իմացական, տրամադրենք Աստուծոյ, ա՛յն ատեն է որ աստուածային ստեղծագործ Ջօրութիւնը ի յայտ կու գայ մեր կեանքին մէջ ու մեզ աւելի կարող կը դարձնէ թէ՛ ունկնդրելու և թէ՛ հասկնալու աստուածային Ջայնը ու պատասխանները:

Սուրբ-Գրային աղօթքը առ Աստուած կախարդութեան և հմայութեան աստիճանէն շատ աւելի բարձր հոգեկան վիճակ մըն է, վերացում և վեհացում է ուր մարդ, նոյնիսկ իր կաւեղէն ու երկրածին հանգամանքով, կը յարաբերի և կը հաղորդուի իր Արարչին հետ: Աղօթքը այն պահն է, ուր մարդկային հողեղէնը և աստուածային շոգեղէն անմատչելիութիւնը իրարու կը հալին, կը դաչին և այդ դաչումով մարդն ազ կ’այլակերպուի ու բիջ մը աւելի աստուածային նմանութիւն կը ստանայ: Աղօթքի այս շարունակական յարաբերութիւնն է որ մարդ-արարածը ստեղծագործ

և աստուածանման կը դարձնէ: Աղօթքի ա՛յս յարաբերութեան մէջ է որ Աստուած *Պահպանիչ* կը կոչուի:

Այսպիսի աղօթքի յարաբերութենէն և աստուածային հպումէն գոյութիւն առած են այն անձերը՝ որոնք կոչուած են Լուսաւորիչներ, Ճնորհալիներ և Նարեկացիներ և նոյնիսկ մեր Մայրենի լեզուի Այբենգիմը:

Հայ գրականութեան մէջ ունինք *“արուեստ”* կամ “արուեստագետ” բառերը: Այս բառերով կ’անուանակոչենք նկարիչները, բանաստեղծները, ֆանդակագործները եւայլն:

Ի՞նչու:

Որովհետեւ վերոյիջեալ անձերը իրենց *հոգիին աչֆերովը* կը տեսնեն ջատերու համար *անտեսանելի*, կը զգան և կը լսեն *հոյարկրաւոր*, ու զայն կը յայտնեն հանրութեան: Տիեզերքի մէջ գոյ եղող, և սակայն մահկանացու մարդոց անհասանելի թուող գեղեցկութիւնները և ներդաշնակուած մեղեքիները մատչելի կ’ընեն կաւաջէն ու մահկանացու մարդկութեան:

Եթէ “արուեստագետ” կ’անուանենք այն անձերը, որոնք կարելիութիւնը ունին յարաբերուելու տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող և ստեղծուած գեղեցկութիւններու հետ, որքա՛ն մեծ ու հանճարեղ արուեստագետներ են այն սուրբերն ու աշխարհականները, որոնք կրցած են յարաբերիլ Արարիչ Աստուծոյ հետ՝ աղօթքով, և առաջնորդել իրենց հաւատակից եղբայրներն ու քոյրերը, որ անոնք ալ իրենց պէս ունենան նոյն աստուածային հպումին փորձառութիւնը:

Տիեզերքի անհունութեան մէջ ի՞նչ գօրութիւններ և գեղեցկութիւններ կան, ով չայ հաւատացեալներ, որ մեր մտքին և կամքին անձնատուութեան և հասունութեան կը սպասեն, որ իրենց գաղտնիքները մեզի յայտնեն: Միթէ չ’արժէ՞ր որ մտնենք մեր ներհասանեակը, գոցենք դուռը ու բանալով մեր ներաշխարհը, պարզենք, սփռենք Աստուծոյ առջեւ մեր իսկութիւնը, մեր էութիւնը մեր ինքնութիւնը՝ այնպէս ինչպէս որ ենք, առանց փողի և ծածկոցի: Այս աղերս արարքը թէ՛ *այաջիսարան* է և թէ՛ *խորտովանանք*: Վստահի՛նք Իրեն ու ապաւինի՛նք աստուածային Զօրութեան, որ թէ՛ մեր Արարիչն է, թէ՛ մեր Պահպանիչը և թէ՛ մեր Լուսաւորիչը:

Հոգեկան ու իմացական այս վերացումին, այս բարձրացումին ու վերելքին մէջ սուզուած, ուղղե՛նք մեր աղօթքը առ Աստուած այն սուրբ, պարզ բայց գերադրական բառերով՝ որ սրվեցուց մեզի Յիսուս՝ մեր Տէրն ու Փրկիչը, ըսելով **“ԿԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ**

ԵՍ՝ . . . :

-ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ՝

Բազմաթիւ աղօթքներ բարձրացած էին Աստուծոյ: Ծատ խնդրուածքներ և աղաչանքներ հասած էին Յաւիտենականին և Ամենակարողին, սակայն այդ բոլոր աղօթքները ուղղուած էին Աստուծոյ **ԱՆՈՒՆԻՆ**:

Բազմաթիւ կրօնքներ գԱստուած Հայր կը կոչեն և աստուածութիւնը կը համարեն *"աստուածներու և մարդոց հայրը"*: (յոյն դիցաբանութեան մէջ): Հրեաներուն համար Ան Հայրն է ու Արարիչը իրենց հետ կնքուած Ուխտին համար: Աստուած կը գերազանցէ մարդկային սեռայնական բնոյթը Իր աստուածութեամբ ու գերակայ է Ան մարդկային "հայրութեան" և "մայրութեան" ըմբոնումէն: Ան Ազգբնապատճառն ու ջարժառիթն է "Հայրութեան": Ձկայ էակ մը (Գոյութիւն) որ կարենայ Հայր ըլլալ նման Աստուծոյ:

Յիսուս հարցուց. *"Ո՞վ է իմ մայրս, կամ՝ եղբայրներս"*: Յետոյ պատասխանեց ըսելով. *"Ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ՝ ա՛ն է իմ եղբայրս և քոյրս և մայրս"*.-Մարկ. 4.35:

Մարդիկ, որպէս մեղաւոր և կաւեղէն, չէին համարձակած կոչել գԱստուած **Հայր** և աղօթած էին Անոր որպէս **Եհովա, Տէր, Աստուած, Երկնաւոր, Բարձրեալ կամ Հինաւորը**: Միշտ *պաշտօնական* յարաբերութիւն մը, ուր սիրոյ և գուրգուրանքի հրապոյրին պակասը ջեշտուած էր: Երկիւղէն քիսած յարգանք և ակնածանք:

Յիսուս Զրիստոս, որ սիրոյ և գուրգուրանքի խնկարկութեամբ ապրած էր Հայր Աստուծոյ հետ, ուզեց մասնակից ընել նաեւ Իր աջակերտները այս սուրբ և ոգեկան հաղորդութեան:

Յիսուս՝ մարդկային հասկացողութեան և գիտակցութեան նոր դարաջրջան մը բացաւ դէպի Աստուած: Աղօթքը ըլլալով հանդերձ յարաբերութիւն մը Աստուծոյ հետ, եղաւ նաեւ *"մասնակցութիւն"* մը, համընթրիք մը և հրաւեր մը առ աստուածային մտերմութիւն:

Մեզմէ Բանինե՛ր ներկայ եղած են մանուկի մը առաջին կանչին առ իր հայրը կամ մայրը: Երախայ մը, միթէ իր հօր կամ մօր անու՞նը կը կանչէ երբ առաջին անգամ **պապա** կամ **մամա** կ'ըսէ: Ո՛չ երբեք: Մանուկ մը իր հօր կամ մօր անունը շատ ուշ կը

սորվի և երբեմն ալ սխալ կ'արտասանէ:

Չաւակ մը իր ծնողքը բնաւ իրենց անունովը չի կանչեր, այլ մինչեւ իր մահը այդ բառերը կ'ըլլան **"հայր և մայր"**: Ես կ'անգիտանամ մեր օրերուն այն նորոյթը, ըստ որուն՝ զաւակը իր հայրը կամ մայրը իր անունովը կը կանչէ: Նոյնիսկ նամակագրութեան մէջ, զաւակ մը իր բառերը կը սկսի *"Միրելի Հայրիկ"* կամ "Միրելի մայրիկս" ըսելով: Ու նաեւ ծնողք մը երբ իր զակին ուղղուած նամակ մը վերջացնէ, իր անունով չ'ստորագրէր, այլ կ'ըսէ, "Բեզ սիրող հայրդ" կամ "անուշիկ մայրդ":

Երբ զաւակ մը դպրոցէն տուն վերադառնայ և իր մայրը կանչէ ըսելով՝ *"մա՛մ"*, կամ ամուսին մը գործէն վերադառնայ և իր կնոջ փաղաքշական *"Ճանիկ"* կանչէ, երախան կը սպասէ լսել իր մօրը ձայնը և ամուսինը կը սպասէ լսել արձագանգը իր կանչին: Ըլլայ երախան և ըլլայ ամուսինը իրենց խօսքը չեն շարունակեր մինչեւ որ իմանան իրենց սիրելիին ձայնը:

Նոյնպէս է նաեւ աղօթող հաւատացեալ մը երբ. ***"Հայր մեր որ երկինքն էս"*** կ'ըսէ, ասիկա կանչ մըն է ուղղուած Աստուծոյ և սիրագեղ արտայայտութիւն մը, որուն կը հետեւի լռութիւն մը մինչեւ որ Աստուած՝ Ի՛նք տիեզերական երաժշտութեամբ պատասխանէ աղօթողի կանչին, որմէ յետոյ աղօթքը կը վերածուի *տրամախօսութեան*: Այսպիսի տրամախօսութեան ընթացքին է, որ աղօթող անձը կը գիտակցի աստուածային խորհուրդներուն և գիտակցութեամբ կ'աղօթէ՝ մօտէն ճանչնալով իր Արարիչը և Անոր Լոյսին մէջ տեսնելով ինքզինքը:

Ուրեմն աղօթելու առաջին քայլը լռութեամբ ***ու նկնդրել*** է լսելու աստուածային ձայնը, որպէսզի մեր աղօթքը չըլլայ մենախօսութիւն, այլ՝ դառնայ տրամախօսութիւն: Մեր աղօթքը պատճա՛ռ և առիթ մը ըլլալու է ***լսելո՛ւ*** և հասկնալու աստուածային Ձայնը:

Նոյնպէս, երբ Յիսուս աղօթել կը սորվեցնէ Իր աջակերտներուն, այդ "Հայր" բառին մէջ կեա՛նք և իմաստ կը դնէ: Աղօթողը ինքզինք անմիջապէս զինք սիրող Հօր մը ներկայութեան կը գգայ: Իսկ մեղաւոր մը որ տարիներով հեռու մնացած էր զթասիրտ Հօր մը ջունչէն և ներկայութենէն, իր տարիներու կարօտը գգալով, "Հաւատով Խոստովանիմ"-ով հրաւեր կը ստանայ ինճոյքի, պարի և երաժշտութեան՝ որպէս թողութիւն իր մեղացը:

Թէեւ մեզի՝ Հայ հաւատացեալներուս շատ սովորական կը թուի ***"Հայր"*** կոչել զԱստուած, սակայն Յիսուսի աջակերտները, վստահ

եմ, որ առաջին անգամ ապշահար եղան և զգուշութեամբ գործածեցին "Հայր" բառը առ Աստուած: Ի՞նչ մեծ առանձնաշնորհում է ասիկա: Որովհետև Տէր Աստուածը "Հայր" կոչել, Անոր կողմէ որդեգրուած ըլլալ կը նշանակէ: Ու եթէ որդեգրուած, Անոր չոգի՛ն ունեցած ըլլալ կը նշանակէ, ու եթէ Աստուծոյ չոգին ստացած ենք, ուրեմն մեր ապրումն ու կենցաղավարութիւնը նման ըլլալու է աստուածային Իսկութեան և Բնութեան: Պատուիրաններուն և անոնց հանդէպ հնազանդութիւն: Աստուածային այս առանձնաշնորհումը, կ'ունենայ նաեւ իր պատասխանատուութիւնը:

***Քու անունդ յայտնի ըրի այն մարդոց,
որոնք աշխարհէն Ինձի առիք՝--Յով. ԺԷ.6:***

Ի՞նչ էր Աստուծոյ այն անունը որ Յիսուս յայտնի ըրաւ մարդոց: Այդ աստուածային սուրբ և սիրեցեալ անունը **"Հա՛յր"** բառն էր, որ "Յիսուս Որդին" հողաշէն մարդկութեան յայտարարեց և յայտնեց: Այս "Հայր" անունին յայտնութիւնն էր որ զԱստուած մտերմացուց Իր մարդ-արարածներուն հետ: Այս "Հայր" անունին միջոցաւ է որ մարդկութենէն սերած կարգ մը անձեր կրցան և կրնան Աստուծոյ որդեգրութեան արժանանալ Միածին և Անդրանիկ Յիսուս Որդիին միջնորդութեամբ:

"Հայր" անունին մագնիսական այս զօրութիւնն էր, որ անառակ և մեղաւոր որդի մը կը վերադարձնէր տուն՝ ապաստանարան, միսթարութիւն, յոյս ու թողութիւն մեղաց: Այս "Հայր" անուան մէջ է այն զօրութիւնը, որ աշխարհը հեթանոս հետեւողականութենէ դէպի Ճշմարիտ Աստուած ճանաչումի վերելքի ճամբան առաջնորդեց:

Մեզի սովորական դարձած "Հայր" անունը նոր հայեացքով անգամ մը եւս դիտենք: Այն ժամանակ պիտի յայտնաբերուի (discover) սիրոյ անսպառ ու յաղթական ոյժը, որ իրեն Բազեց աշխարհն ու տակաւին Իրեն կ'առիւնքնէ այն հոգիները, որոնք կրցած են ճանչնալ, տեսնել ու սիրել այս "Հայր" բառին իմաստը:

ՀԱՅՐ "ՄԵՐ"

Հայր բառէն ետք՝ երբ մեր ջրթները կ'արտասանէն **"ՄԵՐ"** բառը, կարծես աղօթող ենթական այլեւս ինքզինք առանձին և լքուած չ'զգար: Առանց կորսնցնելու իր ինքնութիւնը և անհատականութիւնը, աղօթող այս հաւատացեալը ինքզինք կը գտնէ

միաբանութեան մը մէջ՝ ուր հազարաւորներ ու միլիոնաւորներ ներդաշնակ ու միաջունչ կ'ուղղեն իրենց աղօթքը դէպի "Հայր Մեր"ը--Մէկ **ՀՕԲ**, մէկ Արարչի և մէկ Ստեղծողի: Աղօթող հաւատացեալին գիտակցութիւնը սրբագործուելով՝ իր աղօթակիցները կ'ընդունի որպէս եղբայր կամ քույր, հոգ չէ թէ անոնք չըլլան իր ազգէն կամ իր գոյնէն ու լեզուէն:

Փոքրիկ մը, երբ իր ծնողաց հետ բարեկամական այցելութեան երթալ ազգականի մը և հոն գտնէ խաղալիկ մը, պահ մը կը խաղայ այդ պուպրիկին հետ, և յետոյ, կարծես կը մոռնայ այդ խաղալիկը: Մակայն, տուն վերադարձի պահուն, երբ տանտէրը այդ պուպրիկը սենեակէն բերելով փոքրիկին ձեռներուն մէջ դնէ և ըսէ իրեն թէ այդ պուպրիկը այնուհետեւ ի՛րը պիտի ըլլայ, փոքրիկին ուրախութիւնը չափ ու սահման չ'ունենար:

Ինչո՞ւ:

Ի՞նչու այդքան հրճուանք և ուրախութիւն չէր ունեցած փոքրիկը, երբ կէս ժամ առաջ արդէն խաղացած էր սոյն պուպրիկին հետ:

Որովհետեւ, փոքրիկը խաղացած պահուն, այդ պուպրիկը *իյր* չէր: Նոյն հոգեկան զգացումը կ'ունենայ մարդ էակը՝ երբ աղօթած պահուն, փոխանակ ըսելու "Ո՛վ Աբրահամի, Իսահակի Աստուածը" կամ "Ո՛վ Եհովա" և կամ "Ո՛վ Յաիտեանական Էակ" կրնայ ըսել՝ **"Հայր Մեր"**: Այդ *"Մեր"* բառը ապացոյց մըն է որ "անմատչելիօրէն շեռաւոր և անհասանելիօրէն Մերձաւոր" Աստուծոյ և Իր ցանկալի մարդ արարածին միջեւ արգելք, ընդդիմութիւն կամ տարբերութիւն չկայ:

Աղօթքը նման է "Եկեղեցին Հայկական" բերթուածի "սեղանէն միացող գուլայ-գուլայ խունկերով"ի անուշահոտութեան, որուն միակ ծննդապատճառն է կրակին և խունկին նոյնանալով **զոհուիլը**: Այս ներդաշնակ համերաշխութեան մէջ է որ տիեզերական **ՄէՐԸ** Իր հողածին և հողաջէն մարդը որդեգրելով՝ անոր անյեղլի և անփոփոխ **ԽՆԱՄԱԿԱԸ** կը դառնայ:

ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆՍ ԵՍ.

Աթնուորսին մէջ վեր կամ վար չկայ, սակայն, որովհետեւ մարդ երկրայի՛ն արարած է ու իր ոտները կառչած են երկրագունտին, իրեն համար երկինքը միշտ *վեր* սեպուած է: Մարդ արարածին յոյսը և ակնկալութիւնը միշտ վերէն՝ երկինքէն եղած է: Առաջին հանճարեղ ու գիտնական սերմնացանը, հերկած է հողը, ցանած է սերմերը ու իր դէմքը բարձրացուցած է երկինք սպասելով

անձրեւին որ պիտի գայ *վերէն*:

Դարեր շարունակ, մարդ արարած ֆննած է երկինքն ու արեւը, լուսինն ու աստղերը, այգաբացն ու ծիածանը՝ որոջելու համար սերմնացանքը և սերմնաբաղը: Ուսումնասիրողները եղած են մոզեր, իմաստուններ, մարգարէներ և բանաստեղծներ: Արդի ճարտարարուեստին ծառայութեան համար երկինքը--այսինքն միջոցը կամ անջրպետ ըսուածը, շատ աւելի անհրաժեշտ է քան ինչ որ էր նախնիներուն: Անվիճելի իրականութիւն է որ առանց երկնակամարի կամ միջոցի՝ ո՛չ հեռաձայն, ո՛չ հեռատեսիլ, ո՛չ նաւային ծովագնացութիւն, ոչ օդանաւային և ոչ internet-ի գործունեութիւն կարելի է շարժման մէջ դնել: Արդիական բոլոր գործառնութիւնները կախում ունին միջոց և անջրպետ կոչուող *երկինքի*՝ մէջ գետեղուած հազարաւոր արբանեակներու միջոցաւ:

Մարդ՝ որ երկրածին և հողաջէն արարած մըն է ու գիտէ որոջ, սահմանափակ չափով սանձահարել միջոցի գօրութիւնները, Աստուած՝ որ անքովանդակելի էութիւն է ու ամէն սահմանումէ գերիվեր, ինչե՛ր չունի Իր սրամարդրութեան տակ: Մարդիկ երբեմն կը հպարտանան իրենց ջինած քանի մը հազար արբանեակներով, որոնք քանի մը հազար մղոն կարողութիւն և տարողութիւն ունին միայն՝ միջոցին մէջ: Իսկ անդին, ոչ էութենէ, այսինքն՝ ոչինչէն ստեղծող Արարիչը, որուն ձեռնարուեստը կը տեսնենք խաւարի տարածքին՝ աստղածովերու անվերջ լուսականթեղներուն մէջ, որոնց համրանքը անհաշիւ է ու հեռաւորութիւնները՝ անչափելի: Այսպիսի երկնային անճառ Զաղցրութիւնն ու "տեւական յոյսի ջօջափելի Յայտնութիւն"ը կը կոչենք:

ՀԱՅՐ ՄԵՐ ՈՐ ՅԵՐԿԻՆԱՄ ԵՍ:

Արդի ուազմագիտութիւնը լաւ համոզուած է, թէ ան որ կարենայ յարաբերական չափով իսկ տիրապետել երկինքին--այսինքն միջոցի գօրութիւններուն, ա՛ն պիտի տիրապետէ նաեւ երկրին: Մեր երկնաւոր Հայրը ո՛չ թէ *պիտի*՝ այսինքն ապառնի առումով տիրապետէ երկինքին, այլ՝ Ի՛նքն է Տէ՛րը և Ստեղծիչը աներեւոյթ և երեւցող երկինքներուն ու անոնց մէջ գտնուող բոլոր գօրութիւններուն:

Յիսուս՝ երբ աղօթել կը սորվեցնէ Իր աջակերտներուն, զանոնք կ'առաջնորդէ որ ճշգրտօրէն, ճշդութեամբ և ուղիղ հասցեով աղօթեն, այսինքն՝ ուղղակի Աստուծոյ: Մենք ալ՝ որպէս

աջակերտ շատ մը նախկին աջակերտաց՝ մեր աղօթքը ուղղելու ենք միայն **ՀԱՅԲ** Աստուծոյ: Յիսուս՝ Ինքն իսկ չ՛ուզեր որ մեր աղօթքը Իրեն ուղղենք, այլ անոր փոխարէն կ՛ըսէ. "Եթէ անպատճառ իմ միջամտութիւնս կ՛ուզէք, կրնաք *Իմ Անուանման* խնդրել կամ աղերսել": Բայց աղօթքը՝ պէտք է անպայման ուղղուի *Հայր Աստուծոյ*: Յիսուսի բանաձեւած Տէրունական Աղօթքին բովանդակալից և ուղղադաւան ըլլալու հանգամանքին մէջ՝ պա՛րզ, անպաճո՛յճ, ժուժկա՛լ և խորագգա՛ծ ներկայացումին յատկանիշները կը մնան գերազանցօրէն ներգործական, վերափոխիչ, հաղորդական ու վերաւաց:

ՍՈՒՐԲ ԵՂԻՑԻ ԱՆՈՒՆ ՔՈ

Համայնքի մը կամ ժողովուրդի մը համար ամենանուիրական առարկան և սուրբ բանը ի՞նչ կը կարծուի ըլլալ: Միթէ բանա՞կն է, թէ թնդանօթը: Ո՛չ երբեք: Ազգի մը ամենանուիրական առարկան՝ այդ ազգին **ԳՐԾՆԱ՛ն** է: Ամէն ազգ իր դրօշակով կը ճանչցուի: Երբ ՄԱԿ ի հիմնարկութեան շէնքին մօտենաս, հոն կրնաս տեսնել թէ Բանի երկիրներ անդամ են անոր՝ իրենց դրօշակներուն ծածանումովը:

Եթէ ազգ մը անարգել կ՛ուզես, կոխկուտէ՛ կամ այրէ անոր դրօշը: Անկէ աւելի մեծ նախատինք կամ նուաստութիւն չես կրնար պատճառել այդ ազգին: Երկնի և երկրի Արարիչն ալ ունի՞ դրօշ: Եւ ի՞նչ է արդեօք՝ Աստուծոյ դրօշակը: Աստուծոյ դրօշը՝ Զինք բնորոշող անունը կամ Ինքնաշարժութիւնն է աշխարհի վրայ:

Յիսուսի աջակերտներէն մին՝ իր առաքելաշունչ բառերով բանաստեղծական թոնչֆով յստակօրէն և արժանաւորապէս կը յայտնաբերէ աստուածային **ԳՐԾՆԸ՝** ա՛յսպէս.

"Աստուած բազմապիսի ձեւերով և այլազան օրինակներով կանխաւ խօսեցաւ մեր հայրերուն, մարգարէներու միջոցաւ. այս վերջին օրերս, Ան խօսեցաւ մեզի Իր Որդիովը՝ որ անով աշխարհին ալ ստեղծեց. որ Անիկա Իր փառքերուն լոյսն է և Իր էութեան բուն պատկերը"--Երբ. Ա.1-3:

Աստուած՝ որ բովանդակ տիեզերքի Տէրն է և ամբողջ մարդկութեան Խնամակալն ու Բարերարը, Ինքզինք յայտնած էր շատ մը կերպերով և միջոցներով՝ նախ Բան Յիսուսի Մարմնացեալ Մարդե-

դուժեան: Բայց Աստուած մարդկութիւնը ամենախոր կերպով տպաւորեց և առաւելագոյնս իրեն շահեցաւ Իր Միածին Որդւոյն Յայտնութեան և ներկայութեան հաւատարիմ վկայութեամբը: Յիսուս Որդին՝ Ինք միայն կրցաւ լիովին ճաչցնել Հայր Աստուածը մարդկութեան, որովհետեւ միայն Յիսուս Ինք գիտէր թէ ինչպէս է Հայրը:

"Մէ՛կը չի ճանչնար Որդին, բայց Հայրը, և մէ՛կը չի ճանչնար Հայրը, բայց Որդին..."--Մատթ. ԺԱ.27:

Յիսուսը այսպէս ճանչնալով և տեսնելով Իր վերապրումը, մարդկանց բժշկութիւն տալը, մարդ արարածին տառապակից ըլլալը և մինչեւ մահ մարդկութիւնը սիրելը, Զինք ըրաւ Կենդանի՝ Դրօշ, մանաւանդ երբ Գողգոթայի վրայ եղերականօրէն փողփողեցաւ, ծածանեցաւ որպէս կեանք բաշխող Աստուած-Որդի: Զարը որքան ջանաց նուաստացնել և խոշտանգել այս Կենդանի Դրօշը, Յիսուս այնքան աւելի եղաւ Աստուածայայտնիչ Վարդապետ:

Ներկայիս, այսօր, ովքե՞ր են դրօշը կամ Անունը յայտնագործողները՝ որպէսզի հաւատացեալներ և աշակերտներ կարենան սրբագործել ու նուիրագործել աստուածային Անունը:

Կարելի չէ արատաւորել կամ եղծանել Աստուծոյ Անունը: Մեզի պարտականութիւն կ'իյնայ սրբացնել մեր Հօր Անունը: Մինչ, ճշմարտութիւն է, որ անկախաբար արարածներուս դիրքաւորումէն, Աստուած Ինք չ'արատաւորուիր երբեք և անկարելի է որ Իր սրբութիւնը եղծանուի որեւէ կերպով:

Մակայն, կը խորհիմ որ Աստուած Ինքզինք շատ փափուկ կացութեան մը մէջ դրած եղաւ՝ երբ մեզ ուզեց որդեգրել: Հաւատացեալներն ու Աստուծոյ որդեգիրները՝ որ ստացան աստուածային անուանակոչումը և Աստուած-Որդւոյն փոխանորդը հանդիսացան, եղան նաեւ մէյ մէկ կենդանի դրօշները Հայր Աստուծոյ: Տեսնենք թէ Պօղոս առաքեալ ինչպիսի՞ արտասուաբեր նամակներով կը յորդորէ հաւատացեալները՝ որ չարատաւորեն Աստուծոյ Անունը:

"Այլ դու՛ք էք մերթուղթերը՝-նամակները-գրուած մեր սրտերուն մէջ, ճանչցուած ու կորդացուած բոլոր մարդոցմէ: Յայտնի էք որպէս Քրիստոսի թուղթերը՝ սպասաւորուած մեզմէ և գրուած ոչ թէ մելանով, այլ Կենդանի Աստուծոյ Հոգիով, ոչ թէ քարեղէն տախտակներու վրայ, այլ սրտի մարմնեղէն

տախտակներու վրայ⁶--Բ Կոր. Գ.2.3:

Ահաւասիկ Առաքեալին բացայայտ և հաստատ ըմբռնումը իւրաքանչիւր հաւատացեալի համար, որ կը դաւանի իր Տէրն ու Փրկիչը եղող Յիսուսը: Արեւ⁷ն զգուշաւոր ըլլալու ենք մեր ամենօրեայ գործերուն և մարդոց հետ մեր ունեցած փոխյարաբերութիւններուն մէջ: Մեր նկատողութեան առարկան ըլլալու է ոչ թէ մե՛ր դրամական ջանք, մե՛ր արժանապատուութիւնը, մե՛ր ազգային ու քաղաքական ջանքերը, այլ՝ այն սուրբ անուանակոչումը աստուածային՝ որով որդեգրուած ենք Երկինքէն: Մեր սուտը, մեր կեղծաւորութիւնը, մեր ազահութիւնը, մեր դրամասիրութիւնը, մեր կիրքերը, մեր անժուժկալութիւնը, նաեւ մեր ազգային վրէժ-խնդրութիւնը պիտի արատաւորեն Աստուծոյ սուրբ Անունը՝ որով *մե՛նք* կոչուած ենք:

Ուստի, ամէն անգամ որ կրկնենք *"Սուրբ երկցի անուն Զո"* ն լա՛ւ գիտնալու ենք որ ոչ թէ չա՛րը պիտի արատաւորէ այդ "Սուրբ Անունը" այլ բոլոր անոնք որոնք իրենք զիրենք որդեգիր ըրած են, և սակայն չեն ուզեր լրացնել որդեգրումի պայմանները:

Յիսուս՝ Երկինք համբառնալէն քանի մը վայրկեաններ առաջ, Իր հաւատացեալ աշակերտներուն սա յայտարարութիւնը ըրաւ.

"Երբ Սուրբ Հոգին իջնէ ձեր վրայ՝ զօրութիւն պիտի աննէ՛ք և վկաներ պիտի ըլլա՛ք Ինձի համար" -Գործ. Ա.8:

Ահաւասիկ ներկայ դարուս կենդանի դրօշակները՝ Յիսուսի վկանե՛րն են: Իսկ ես կը փութամ հարցնելու, թէ ինչպիսի՞ վկաներ եղած ենք մենք, այսօր:

ԵԿԵՍՅԷ ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆ ՔՈ

"Երկինքի Թագաւորութիւնը", "Աստուծոյ Արեւոյութիւնը" կամ "Եկեսցէ Արեւոյութիւն Զո"ն նոյն իմաստն ու նշանակութիւնը կրող խօսքեր են: Վերոյիշեալ ակնարկութիւնները չորս Աւետարաններուն մէջ աւելի քան երեսուն անգամ յիշուած են և կը ցուցաբերեն այս կոչին մեծ կարեւորութիւնն ու կենսական արժեքաւորումը:

Սուրբ Աւետարաններու առաջին քարոզութիւնը, որ Յովհաննէս Մկրտիչի բոցավառ բացազանչութեամբ սկսաւ, կ'ըսէ.

“Ազաշխարեցէ՛ք, որովհետեւ Երկինքի Արքայութիւնը մօտեցած է” -Մատթ. 9:2:

Իսկ երբ Յիսուս, անապատի կիզիչ տափէն ու Աստանայի խաբէական ցանցերը և սաղրանքները տապալելէն կը վերադառնայ Գալիլեա, Իր առաջին քարոզութիւնը կ’ըլլայ յար և նման Յովհաննէս Ակրտիչի քարոզութեան.

“Ազաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է Երկինքի Արքայութիւնը”--Մատթ. 9:17:

Աւետարանագիր Մարկոս՝ նաեւ կ’ըսէ իր Աւետարանին մէջ.

“Յիսուս եկաւ Գալիլեա կը քարոզէր Աստուծոյ Աւետարանը և կ’ըսէր. ժամանակը լրացած է, և հասած է Աստուծոյ Արքայութիւնը. ազաշխարեցէ՛ք և հաւատացէ՛ք Աւետարանին”--Ա.14-15:

Յիսուս՝ Իր աշակերտները դաստիարակելէ ու մարգելէ յետոյ՝ երբ երկու առ երկու կը դրկէ զանոնք, որ երթան գիւղերն ու քաղաքները քարոզեն ու բժշկութիւններ ընեն, Իր պատուէրը կ’ըլլայ.

“Երբ երթաք, քարոզեցէ՛ք ու ըսէ՛ք--Երկինքի Արքայութիւնը մօտեցած է--հիւանդները բժշկեցէք, բորոտները մաքրեցէք, դեւերը հանեցէք, ձրի առիք, ձրի ալ տուէք”:

Յիսուսի այս շատ պարզ ու ակներեւ--Երկինքի Արքայութիւն--ստորոգելին, ամենասխալ կերպով հասկցուած, կամ դժուար հասկնալի խօսք դարձած է եկեղեցականներու մօտ և հաւատացեալներու ըմբռնողութեան մէջ:

Մենք, հաւատացեալներս, որ ամէն օր կ’աղօթենք և կ’ըսենք, *“Եկեացէ՛ Արքայութիւն Ըն, երկցին կամք Բո՛ւ որպէս յերկինս և յերկրի՛”* այնպէս կը կարծենք, կամ մեզի այնպէս կը թուի, թէ երբ մեռնինք՝ *մե՛նք* պիտի երթանք Երկինքի արքայութիւնը: Մինչդեռ աղօթքն ու պատուիրանը արքայութեան *երկրի՛ր* գալուն, *երկրի՛ր իջնելո՛ւն* կը վերաբերի:

Յիսուս այս աղօթքով կ’ուզէ Իր հետեւորդներուն մտայնութիւնը ուղղել՝ Աստուծմէ խնդրելու որ Իր Երկնային Արքայու-

թիւնը շուտով գայ--եկեսցէ--և բանասարկուին խաբէական շարժումները *դառըին երկրի վրայ*: Յիսուս կ'ուզէ *արմատակա՛ն* բժշկութիւն և փրկութիւն բերել այս աշխարհին՝ երկրագունտի մարդկութեան:

Յիսուս Իր մկրտութենէն ետք, երբ արանձնացաւ արեւելքի անհրապոյր անապատները՝ խոկալու, խորհրդածելու Իր երկնային առաքելութեան մասին, սահեցա՛ն անցա՛ն ժամերն ու ժամանակները, որովհետեւ, դիտելով Իր ներաշխարհը, Որդին հասած էր մինչեւ իր Հօր ծոցը: Իր այս խոր խոկումներուն ու յարաբերութեան մէջ Հօրը հետ, չէ՛ր անդրադարձած ժամանակի անցին: Որովհետեւ, մարդ երբ Աստուծոյ հետ իսկական յարաբերութեան մէջ մտնէ, անցած կ'ըլլայ նաեւ յաւիտենականութեան ծոցը, ուր ժամանակը յարաբերական է միշտ: Աելի ճիշդը, անհանգրուան է, անսկիզբ և անվախճան:

Յիսուս Իր առաքելութեան տեսլականը երբ կը ստանայ Իր Հօրմէն՝ այն ատեն միայն կը զգայ, Ինքիբմէջ՝ Իր մարմնոյն մէջ և կ'անդրադառնայ որ բառասուն օրերէ ի վեր հոգեկան յափշտակութեան մէջ, վայելած է Իր Հօր ներկայութիւնը՝ անտեսելով Իր մարդեղութեան նիւթական կարիքները:

Բանասարկուն, որ Սատանայ ալ մականուանուած է, ջուրհի նման հետեւած էր Յիսուսի: Անօթութիւնն ու մարմնական պահանջները լաւագոյն առիթներ համարելով, կը մօտենայ մարմնապէս տկարացած Աստուածորդւոյն, աներեւոյթ որոգայթի մէջ ձգելու համար Ջայն: Յիսուսը, ջատ մը փորձութիւններու ենթարկելէ վերջ, մոլորութեան վարդապետ Սատանան, Ջայն կը տանի ջատ բարձր լեռան մը վրայ և Յիսուսին ցոյց կու տայ աշխարհի բոլոր թագաւորութիւնները ու անոնց փառքը, ու որպէս լուսեղէն հրեջշակ իր վարմին թելերը լարելով կ'ըսէ.

“Այս բոլոր թագաւորութիւնները մեզի պիտի տան, եթէ գետին իյնալով երկրպագես ինձի: --Մատթ. Դ.8-9:

Յիսուս՝ Իր Հօրը ներկայութենէն հոգեպէս և էութեամբ զօրացած, աննկուն ու յաղթական դուրս կու գայ այս ճակատամարտէն:

Սատանան, որ ուխտադրուժ հակառակորդը եղաւ Աստուծոյ, ապստամբելով երկինքի Թագաւորութեան դէմ, դարաջրջանի մը համար ինքզինքը տէր դարձած ըլլալ կը կարծէ այս աշխարհին: Այս աշխարհը՝ չարէն ու մեղքէն ազատագրելու աշխատանքը կատարելու համար է որ Յիսուս դրկուեցաւ մեզի՝ աշխարհ:

Որքան իրական է, որքան ճշմարիտ է ու որքան Սուրբ Գրային է վերոյիշեալ բացատրութիւնները վերագրել "Երկինքի" կամ "Աստուծոյ" Թագաւորութեան վարչակարգի մը, որ պիտի հաստատուի ու կտաւարէ երկիրը Իշխանական արքայականութեամբ:

Հին Կտակարանի հեղինակ բանաստեղծներ ու մարգարէներ այնպէս կը կարծէին՝ որ Աստուծոյ Թագաւորութիւնը տիեզերական է, այսինքն՝ ոչ աշխարհական, այլ երկնային կամ *ոգեղէն*: Կորնի որդիներու "Միտոյ Երգը": Կորնի, Մովսէսի դէմ ապստամբութիւն ցոյց տուած ըլլալուն համար իր ընտանիքովը մեռաւ ու կորսուեցաւ: Իր կարգ մը զաւակները, որոնք հաւատարիմ մնացին Մովսէսի, և որոնց սերունդէն ծնաւ նաեւ Սամուէլ մարգարէն, գրած էին հետեւեալ Բերթուածը որուն մէջ Աստուած կը ճանչցուի որպէս բովանդակ ստեղծագործութեան Իշխանն ու Թագաւորը.--Սաղ. ԽԵ. 6:

"Ով Աստուած, Բու այժոռոյ յախտեանս յախտենից է. Ըն թագաւորութեանդ զաւզանդ ուղղութեան զաւզան է"

Սաղմոսերգու Դաւիթ եւս սապէս կ'արտայայտուի աստուածային տիեզերական արքայութեան նկատմամբ.

Տէրը իր աթոռը երկինքի մէջ հաստատեց.

Ու անոր Թագաւորութիւնը ամէնուն վրայ կը տիրէ:*

-- Սաղ. ԸԳ. 19:

Ուրիշ ալթիւ Դաւիթ Թագաւոր կ'ըսէ.

"Ըն Թագաւորութեանդ փառքը պիտի խօսին,

Ու Բու զօրութիւնդ պիտի պատմեն.

*Որպէսզի Անոր զօրաւոր գործերը ու անոր
Թագաւորական փառաւոր մեծութիւնը Մարդոց
որդիներուն գիտցնեն':*

"Ով դռներ, գլուխնիդ վեր վերցուցէ՛ք.

Ու վերցուցէ՛ք, ով յախտենական դռներ,

Որպէս զի փառաց Թագաւորը մտնէ.

Ո՞վ է այս փառաց Թագաւորը,

Կարող ու Հզօր Տէրը,

Պատերազմի մէջ հզօր Տէրը ...

Ինքն է փառաց Թագաւորը:*

Միեւն Սարգսրէ իր տեսիլքին մէջ զԱստուած սապէս կը բացատրէ.

***Տէրոջը խօսքը մտիկ ըրէ՛ք,
Տէրը իր աթոռին վրայ նստած տեսայ,
Ու երկինքի բոլոր զօրքերը անոր աջ կողմը
և Ձախ կողմը կայներ էին՝-- 2րդ Մնցդ-
ԺԸ.18:***

Յոք, որ Սառուտեցի Արաք մըն էր ձուս երկրին մէջ արդար և աստուածավախ, ու ապրած Աբրահամէն ետք, բայց Մովսէս մարգարէէն առաջ--մօտ 1625 Ն.Բ.--սապէս կ'արտայայտուի տիեզերքի Արարիչին նկատմամբ.

***Պէ՛ր էիր դու ն՝ երբ ես երկրի հիմերը կը դնէի,
Ըսէ ինձի՛՝ եթէ իմ աստութեան տեղեկութիւն ու նիս:
Եթէ գիտես՝ ըսէ, Ո՞վ դրաւ անոր չափերը,
Կամ թէ անոր վրայ լարը ո՞վ փաշեց:
Անոր հիմերը ի՞նչի վրայ հաստատուած են,
Կամ անոր անկիւնին փարը ո՞վ դրաւ,
Երբ առաւօտուան աստղերը մէկտեղ փառաբանու-
թիւն կ'ընէին,
Ո՞ր երբ Աստուծոյ բոլոր որդիները ցնծութեամբ
կ'աղաղակէին՝--Յոք ԼԸ.4-7:***

Աստուածային այս տիեզերական հանգամանքին հասկացողութիւնը կամաց կամաց բնաշրջուելով ու բիւրեղանալով վերածուեցաւ սեղմիմաց հաւատալիքի: Աստուած ճանչցուեցաւ ու եղաւ որպէս Թագաւորն ու Պահպանիչը չրեայ ժողովուրդին, չրեայ ազգին և ապա Երկրին: Մովսէս՝ օրէնսդիր ու մարգարէ, իր ստացած աստուածային յայտնութեամբ, զԱստուած յայտարարեց նաեւ աշխարհի՛ Թագաւոր իր չրեայ ազգին: Այսպիսով, Աստուած ո՛չ միայն կը տիրէր ընդհանուր տիեզերքին ու անմերձեանալի էր մարդոց, այլ՝ աշխարհի մէջ ունէր ընտրեալ ժողովուրդ մը՝ յանձին չրեայ ազգին:

"Արքայութիւն Բո"ն կամ "Երկինքի Թագաւորութիւն"ը դարերու ընթացքին աւելի բիւրեղանալով, լուսաւորում ստանալով, ապա Աստուած մարգարէներու և բանաստեղծներու աւելի մօտէն հաղորդուելով, տեսանողներ ըմբռնեցին, որ Աստուած ոչ միայն չրեայ ազգը կ'ուզէ առաջնորդել, այլ՝ **ամբողջ** աշխարհի ժողովուրդները և թագաւորութիւնները:

Աշխարհի վրայ աստուածային այս ամենակալութեան, տիրա-

պետութեան գաղափարը աւելի յստակ եղաւ՝ երբ Հրեայ ժողովուրդը մեծ մասամբ տեղահան ըլլալով գաղթական-գերի տարուեցաւ Բաբելոն: Այս գերութիւնը ազգային աղէտ մը ըլլալով մէկտեղ, եղաւ նաեւ հոգեկան ու կրօնական ներհայեցողութեանց և խոր հասկացողութեան ժամանակաշրջան մը: Այս աննախընթաց գերութեան շրջանը, որ 70 տարի տեւեց, ծնունդ տուաւ հոգեշունչ և մարգարէարժան գրականութեան, քերթուածներու և երկնամերձ տեսիլներու: Այս գերութեան շրջանին ապրեցան Եսայի, Եզեկիէլ, Դանիէլ, Ովսէէ և ջատ մը ուրիշ մարգարէներ:

Գերութեան այս շրջանի մարգարէներն էին որ վկայեցին, երգեցին ու մարգարէացան **ՄԵՍԻԱՅԻ** ծնունդը, Յիսուսի Մարդեղութիւնը և Աստուծոյ Թագաւորութեան մարդկային վերահասութեան գաղափարը: Առանց այս մարգարէներու հրաշունչ գրականութեան և մաքրակրօն հոգիներու ստեղծագործած ու մարդոց էութիւնը վերելքի տանող հեղինակաւոր տաղերուն, աշխարհիս կրօնաւորներն ու հաւատացեալները ջատ քան պիտի կորսնցէին:

Դանիէլ, որ կոչուեցաւ, "Աստուծոյ սիրելին" սապէս կը բացատրէ Երկնային Թագաւորութիւնը.

“Ու այն Թագաւորներուն օրերը Երկինքի Աստուածը Թագաւորութիւն մը պիտի հանէ որ յաւիտեան պիտի չաւերուի, և այս Թագաւորութիւնը ուրիշ ժողովուրդի պիտի չթողուի. անիկա այս բոլոր Թագաւորութիւնները պիտի փշրէ ու պիտի հատցնէ, ու ինք յաւիտեան պիտի մնայ”--Դան. 2.44:

"Աստուծոյ սիրելի"ն՝ Դանիէլ, իր սրբացած հայեցողութեամբ այլեւս իր Հրեայ ազգը *"Աստուծոյ Ընտրեալ ժողովուրդ"* չի ճանչնար, այլ իր տեսանողութեան մէջ Աստուծոյ Ընտրեալներ կը կոչուին--*"Սուրբերու Միաբանութիւն"*-- մը, ինչպէս կը կարդանք.

“Եւ Թագաւորութիւնը *Բարձրեալին սուրբերը* պիտի առնեն, ու անոնք պիտի ժառանգեն Թագաւորութիւնը մինչեւ յաւիտեան, և յաւիտեանս յաւիտենից:

"Մինչեւ որ Հինաւուրցը եկաւ, և Բարձրեալին սուրբերուն իրաւունք տրուեցաւ, ու ժամանակը հասաւ որ սուրբերը Թագաւորութիւնը առնեն:

"Բայց ատեանը պիտի բազմի, ու անոր իշխանու-

Թիւնը [Սառանային] պիտի վերցնեն, զանիկա մինչեւ վերջը բնաջինջ պիտի ընեն ու կորսնցնեն: Եւ Թագաւորութիւնը և Իշխանութիւնը, ու բոլոր երկինքի տակ եղող Թագաւորութիւններուն մեծութիւնը Բարձրեալին սուրբերուն ժողովուրդին պիտի տրուի. Անոր Թագաւորութիւնը յախտեալան Թագաւորութիւն է, ու բոլոր իշխանները Անոր պիտի ծառայեն ու պիտի հնազանդին” --Դան. Է.18, 22, 26-27:

Մինչեւ Յիսուսի Մարդեղութիւնը և մարմնական Ծնունդը Ա. Մարիամ Կոյսէն, Դանիէլ մարգարէին գրութեան նման բազմաթիւ արձանագրութիւններ եղան ու յայտարարուեցան: Անոնք գրական ու մարգարէական արժէք ունէին, նոյնիսկ Յիսուսի և Առաքեալներու ջրջանին: Այս գիրքերէն ոմանք մինչեւ այսօր գոյ են և հակառակ իրենց մարգարէական առժեքին՝ չին կամ նոր Կտակարաններուն մէջ արժանի տեղ չեն գրաւած: Մակայն ըստ էութեան, ինքնին շատ արժեքաւոր տեսութիւններ են:

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆ տարազը միայն չրեական գրականութեան մէջ չէ որ յիշուած է: “Աստուծոյ Թագաւորութիւն”ը կամ “Երկնային Իշխանութիւն”ը յիշուած է նաեւ Պարսկական Ջրադաշտի գրականութիւններուն մէջ ալ: Ջրադաշտ շատ մեծ տեղ յատկացուցած է այս նիւթին՝ իր գրութիւններուն մէջ: Արեւմուտքի մէջ ալ մարդիկ անտես չեն առած *Աստուածային Թագաւորութեան* մը գաղափարը:

Վիրկիլիոս, որ մեռած է Յիսուսի ծնունդէն 19 տարիներ առաջ, շատ գեղեցիկ և յստակ կերպով յօրինած է երեք էջնոց մարգարէական բանաստեղծութիւն մը, որուն մէջ կը խօսի Երկնային Թագաւորութեան մը մասին, ուր պիտի տիրէ արդարութիւն և իրաւունք մինչեւ յախտեան՝ աստուածներու Որդիի իշխանութեամբը երկրիս վրայ: (“The Eclogues, Georgics and Aeneid of Virgil”, Eclogue IV)

Այս բոլորը կ’ապացուցանեն՝ որ Աստուած Իր անմերձեանալի հեռաւորութեամբ իսկ շատ մօտ է մարդ արարածին և Իր ծրագիրները կը յայտնէ *բոլոր* անոնց, որոնց Ինք կը հաճի, կը հաւնի առանց նախապաշարումի: Առանց զարտոդութիւն կամ խտրութիւն ընելու չրեայի կամ հեթանոսի, կրօնքի կամ լեզուի,

գոյնի կամ ֆաղափակրթութեան, և կամ, Արեւելքի ու Արեւմուտքի մարդոց որդիներուն միջեւ:

Յիսուս՝ անապատի այրող և անհիւրընկալ ապառաժուտ միջավայրէն կու գայ Գալիլիոյ մարդաբնակ դաշտավայրերը ու կ'իմանայ Յովհաննէս Մկրտիչին բանտարկութիւնը: Յովհաննէս Մկրտիչ որքան ալ ամենափոքրն էր Աստուծոյ Արքայութեան մէջ, սակայն իր ֆարոգութիւնը շատ մեծ եղած էր, որովհետեւ ան ֆարոգած էր **Աստուծոյ Թագաւորութեան** և Յիսուսի Երկրորդ Գալստեան մասին:

Եթէ ուզենք խտացնել Յիսուսի երեւուկէս տարուան ընթացքին ֆարոգութիւնները, կը տեսնենք որ այնտեղ կայ մէկ նիւթ միայն, և այդ եղած է **ԱՐՔԱՅՈՒԹԻՒՆՆ ԵՐԿՆԻ**: Յովհաննու Աւետարանը երկու անգամ միայն յիշած է **ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ**, սակայն Աւետարանիչը անոր փոխարէն գործածած է **“ՅԱԽՍԵՆՎ-ԿԱՆ ԿԵԱՆՖ”** խօսքերը: Ի՞նչու, որովհետեւ այդպէս մղում ստացած է այդպէս մտայղացած է վերէն:

Կան հաւատացեալներ, որոնք կ'ուզեն "Երկինքի Թագաւորութիւնը" նոյնացնել Յիսուսի Եկեղեցիին հետ: Այսինքն՝ Զրիստոսի Եկեղեցին տարածուելով և ընդհանրանալով, ի վերջոյ պիտի ըլլայ կառավարողը այս աշխարհին:

Ուրիշ հաւատացեալներ ալ այնպէս կը հաւատան, որ Աստուծոյ Թագաւորութիւնը *հոգեկա՛ն* վիճակ մըն է, ներքին կամ ներաշխարհային, այսինքն, եթէ հաւատացեալ մը Յիսուսը իր սրտին ու մտքին մէջ ունի և իր կեանքը կը ներդաշնակէ ըստ Յիսուսի պատուերներուն, ապրած կ'ըլլայ Աստուծոյ Թագաւորութեան մէջ:

Յիսուսի աջակերտները, որ շատ բան սորված էին Յիսուսէ ու թափանցած իրենց Տիրոջ ապրումներուն խորքը, նոյնքան ալ անգէտ էին կարգ մը ուրիշ ու մանաւանդ այս "Երկնից Թագաւորութեան" գաղափարին շուրջ: Պատճա՞ռը: Որովհետեւ իրենց չրեութիւնը չէին կրցած թօթափել և **ազգայնամոլ** կը մնային: Անոնք *“Իսրայէլեա՛ն”* պրիսմակէ կը դիտէին կեանքն ու աշխարհը:

Սոյն վերլուծումս սխալ գտնողներ կրնան ըլլալ:

Միասին կարդանք Գործք Առաքելոց նամակին առաջին մասը: Եւ անոնք, այսինքն աջակերտները, մօտենալով Յիսուսի, հարցուցին Անոր ու ըսին.

“Տէ՛ր, այս ժամանակի՞ս մէջ պիտի վերահաստատես ԻՍՐԱՅԷԼԻ՛ Թագաւորութիւնը”:

Աջակերտները, որ ականատես եղած էին Յիսուսի հրաշք-

ներուն, երկնառաֆ ֆարոգութիւններուն, անտերիտալի ֆաջութեան, անշահախնդիր անձնուրացութեան, Գեթսեմանի պարտէզի աղօթֆին, նուաստացուցիչ ձերբակալութեան և եղերական խաչելութեան ու մահուան, առաւել եւս հրաշափառ ու յաղթական Յարութեան, առանց տատամսելու կը հարցնեն իրենց Տիրոջ՝ "հիմա՞ պիտի վերահաստատես *Իրաջէլի* թագաւորութիւնը": Արքա՞ն ջփոթ է իրենց մէջ "Աստուծոյ" և "Իսրայէլի" թագաւորութիւնը:

Յիսուս, որ ֆիչ ատեն ետֆ պիտի համբարնար՝ դէպի Հայրը, ունեցաւ միակ մէկ պատասխան՝ այս չսպասուած հարցումին ու ըսաւ.

“Ձեզի տրուած չէ գիտնալ այն ժամերը և ժամանակները, զոր Հայրը հաստատեց Իր իշխանութեան մէջ”--Առաֆ. Ա.7:

Թէեւ աշակերտներուն ըրած հարցումը տղայական էր, սակայն Յիսուսի տուած պատասխանը բնաւ ժխտական հասկնալու չէ: Յիսուս չըսաւ՝ *“Այի հետաֆրֆրուիֆ Աստուծոյ Թագաւորութեամբ”*, այնպէս ինչպէս ոմանֆ օրեր կը սահմանեն և օրացոյցներ կը յօրինեն ու ժամեր կ’որոշեն, որոնց մէջ պիտի կատարուի Յիսուսի երկրորդ “Գալուստ”ը: Յիսուս չ’ուզեր տեսնել մեզ որպէս թեթեւ հետաֆրֆիրներ և փարատենչիֆ բանգէտներ ու յաւակնոտներ՝ Իր երկրորդ Գաուստին, այլ կ’ուզէ գտնել մեզ *պատօրաւոս* ու հաւատարիմ Իր Գալուստեան:

Ի՞նչ է ուրեմն *իրական* ու ճշմարիտ “եկեացէ Արքայութիւն Ըո”ն:

Գալիֆ “Աստուածային Արքայութիւն”ը աշխարհի *տիրապէտումն* է սրբակենցաղներու միջոցաւ: Յիսուս վերջին Պատարագէն չբաժնուած՝ Իր տասնը մէկ Առաֆեալներուն սա խոստումը կ’ընէ.

“Ես ալ ձեզի Թագաւորութիւն մը ուխտ կ’ընեմ՝ ինչպէս Իմ Հայրս Ինծի Թագաւորութիւն մը ուխտ ըրաւ. Արպէսզի դուֆ Իմ սեղանէս ուտէֆ ու խմէֆ Իմ Թագաւորութեանս մէջ”--Ղուկ. ԻԲ.29-30:

Աննիւթական, եթերային կամ հոգեկան վիճակ մը չէ՝ այս՝ ինչպէս կը տեսնէֆ, այլ նիւթական ու բնական եղելութիւն մը, ուր *ուտել ու խմել* ալ պիտի ըլլայ:

Յիսուս հարիւրապետի մը խնդրանֆով՝ անոր ծառան բժշկեց,

ու ականատես եղաւ այդ Հռոմէացիին հաւատքին և նուիրումին, ու բաղդատեց այս օտարականին հաւատքը Հրեայ ժողովուրդի մոլե-
նանդութեան հետ, ու ըրաւ յայտարարութիւնը՝ սապէս.

**“Ճշմարիտ կ’ըսեմ ձեզի, Իսրայէլի մէջ անգամ
այսչափ հաւատք չգտայ: Եւ կ’ըսեմ ձեզի, որ
Արեւելքէն ու Արեւմուտքէն շատեր պիտի գան և
երկինքի Քաղաւորութեանը մէջ պիտի բազմին
Աբրահամի, Իսահակի և Յակոբի հետ, իսկ Քաղաւ-
րութեանը որդիները դուրսի խաւարը պիտի հան-
ուին. հոն պիտի ըլլայ լալ ու ակռաներ կծրտել”:**
--Մատթ. Ը.11-12

Յիսուս չունի ազգայնամոլութեան նախապաշարումը: Անհա-
տին արժանիքն է, որ զինք քաղաքացի պիտի ընէ մարդկային նոր
ընկերութեան: Իսկ անարժան "Արքայութեան որդիներ"ը պիտի
հշուին կամ նետուին արտաքին խաւարը:

Վերջին ընթրիքէն ետք և Մուրք Հաղորդութեան Խորհուրդը
հաստատելէն յետոյ, Յիսուս բաժակածառ մը խօսեցաւ՝ որ պատմու-
թեան մէջ աննախընթաց է ու նուիրական: Յիսուս՝ ձեռքի բռնած
բաժակը գինիով լեցուց ու վեր բարձրացնելով ու նայելով Իր
տասնմէկ հաւատարիմ և Ձինք սիրող պարզամիտ աշակերտներուն
անձնուրացութեան, ուխտ մը ըրաւ ըսելով.

**“Ճշմարիտ կ’ըսեմ ձեզի, որ այլեւս որթատունկի
բերքէն պիտի չխմեմ մինչեւ այն օրը, երբ պիտի
խմեմ նորը Աստուծոյ Արքայութեան մէջ”**--Մարկ.
ԺԷ.25:

Այս գրութեան մէջ նաեւ կը տեսնենք որ "Արքայութիւնը"
երկրային է և բնական. Յիսուս Ի՛նք բացումը պիտի կատարէ *նոր*
Ֆիւնիին Իր յաղթական բաժակածառով:

Յիսուսի աշակերտները, որ տարածուեցան աշխարհի երեսը ու
Բարոզեցին իրենց Քրկիչը եղող Յիսուսը և Անոր Յարութիւնը,
անտես չադին նաեւ Բարոզել "Աստուծոյ Արքայութիւն"ը: Պօղոս
Առաքեալ, որ աշակերտ չէր եղած Յիսուսի, ինչպիսի՛ գօրութեամբ և
հոգիով կ’արտայայտուի.

“Ազգա պիտի գայ վախճանը, երբ որ Ան (Յիսուս) տայ

Թագաւորութիւնը Աստուծոյ և Հօրը ձեռքը, երբ խափանէ ամէն իշխանութիւնը և ամէն պետութիւնը ու գօրութիւնը: Վասնզի, անոր պէտք է Թագաւորութիւնը ընել մինչեւ որ բոլոր Թշնամիները դնէ իր ոտներուն տակ: Վերջին Թշնամին որ պիտի խափանի մահն է. վասնզի գիրքը կ'ըսէ, ամէն բան հնազանդեցուց՝ դնելով անոր ոտներուն տակ: Բայց երբ կ'ըսէ թէ՛ ամէն բան անոր հնազանդեցուած է, յայտնի է թէ բացի անկէ՛ որ ամէնը անոր հնազանդեցուց:

“Ու երբ ամէնը անոր հնազանդ ըլլայ՝ այն ատեն Որդին Ինք ալ պիտի հնազանդի Անոր, որ իրեն հնազանդեցուց ամէնը, որպէսզի Աստուած ըլլայ ամէնը ամէն բանի մէջ”--Ա. Կոր. ԺԵ.24-28:

Պօղոս Առաքեալին վերոյիշեալ սողերը շատ յուսադրական ու Բաջալերական կերպով կը ներկայացնեն աշխարհավերջի կատարածը և Յիսուսի յարթանակը մահուան ու գերեզմանին վրայ: Ու նաեւ՝ որպէս Յարթող աշխարհի տերութիւններու վրայ: Ու նուաճելով չարին գօրութիւնը այս աշխարհը պիտի յանձնէ Իր Հօր, որպէսզի “Երկինքի Արքայութիւն”ը իսկապէս եկած ըլլայ այս աշխարհին վրայ: Ու այս ամէնը՝ զգալիօրէն, շօշափելիօրէն, տեսանելիօրէն և ապրելով:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին եւս՝ իր Հանգանակ Հաւատոյի մէջ կ'ըսէ.

«Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ Թագաւորութեանն ոչ գոյ վախճան»:

Աստուածաբան Աւետարանիչ՝ Յովհաննէսի տեսիլքը, որ կու գայ լրացնելու այս նիւթը, խիստ շահեկան է, բացորոշ և խորիմաստ.

**“Եւ երբ եօթներորդ հրեշտակը հնչեցուց փողը՝ երկինքի մէջ լսուեցաւ ձայն մը՝ որ կ'ըսէր,
--Ամբողջ տիեզերքի Թագաւորութիւնը մեր Տիրոջ և իր Զրիստոսինը «Օծեալին»ը եղաւ, և Ան պիտի Թագաւորէ ամէն բանի վրայ՝ յաւիտեանս յաւիտենից”--Յայտ. ԺԱ.15:**

Վերոյիշեալ համարներուն մէջ, երբ Յովհաննէս Առաքեալ **ԱՃԻԱՐՁ** բառին փոխարէն "Ամբողջ տիեզերք" բառերը կը գործածէ, պատճառն այն է՝ որ այլեւս միջոցին կամ անջրպետին մէջ անկիւն մը պիտի չըլլայ, ուր "չար"ը գոյութիւն ունենայ և երբեւէ կրկին փորձէ Աստուծոյ դէմ ըմբոստութիւն սարքել:

Նոյ նահապետէն յետոյ մարդկութիւնը երկինքի մէջ չապրեցաւ, այլ նոյն մարդաշխարհի վրայ: Նոյնպէս եւս Յիսուսի երկրորդ Գալուստէն վերջ, հաւատացեալները պիտի ապրին երկրի վրայ, որպէս յարթական ժառանգորդները աշխարհի:

ԵՂԻՑԻՆ ԿԱՄՔ ՔՈ ՈՐՊԷՍ ՅԵՐԿԻՆՍ

ԵՒ ՅԵՐԿՐԻ

Թէեւ այս աղօթքը մարդուն կողմէ խնդրուածք մըն է ուղղուած Հայր Աստուծոյ, սակայն Յիսուսի կողմէ ալ *պատու է՛ր*, մըն է մեզի՝ որ մենք խնդրենք ու մեր աղերսին մէջ *հետեւ ողակաւ*, ըլլանք և յարատեւենք:

Ի՞նչու արդեօք:

Որպէս մարդ և արարած, և բաղդատմամբ տիեզերքի անհունութեան, հիւլէ մը անգամ չենք նկատուիր, սակայն և այնպէս կ'ուզենք պատասխան մը գտնել կամ տալ կեանքի խորհրդաւոր և յաւիտեանական հարցերուն: Կեանքի խորհուրդը լուծելու և անոր իմաստ մը տալու ճիգը, արդէն մարդը տեսակ մը դէպի աստուածութիւն առաջնորդած է, կամ աստուածային յարում մը ունեցած է: Մարդ առանց աստուածային հպումի, չի կրնար հողէ կամ կաւէ բանականութիւն ստանալ և խորհող ու տրամաբանող անձնաւորութիւն դառնալ:

Մարդ՝ որպէս խորհող ու տրամաբանող անձնաւորութիւն, երբ հանդիպի աստուածաշունչ խորհուրդներու՝ որ ճառագայթած են Յիսուս անուն Մարդեղեալ Անձէն, անկարելի է որ աննկատ ձգէ այս նոր խորհուրդները: Նշենք այն քանի մը խորհուրդները, զորս Յիսուս յայտնաբերեց.

1. *"Հիմա է այս աշխարհի դատաստանը, հիմա է որ այս աշխարհի իշխանը դուրս պիտի նետուի"*--Յով. ԺԲ.31:
2. *"Կու գայ այս աշխարհի իշխանը, և ան իմ վրաս ոչ մէկ իշխանութիւն ունի"*--Յով. ԺԷ.15:

Յիսուսի վերոյիշեալ լուսապայծառ խօսքերը մեզ կը ստիպեն հետեւցնել, թէ այս աշխարհը իշխանաւոր մը ունի, և թէ այս իշխանաւորը հակառակորդն է Յիսուսի: Այս հակառակորդը ճանչցուած է որպէս հակա-Աստուած ապստամբ և բանսարկու: Եթէ մեր սրամաքանութիւնը մեզ ուղիղ կ'առաջնորդէ, ուրեմն այս աշխարհ-երկրագունտը Սատանայէ առեւանգուած պատանդ մըն է և ինք անոր կ'իջիւէ իր ըմբոստ գօրութեամբ:

Հետեւաբար, իւրաքանչիւր հաւատացեալ՝ որ կ'աղօթէ ըսելով. **“Եկեացէ Արքայութիւն Բո, Եղիցին կամք Բո որպէս Յերկինս և յերկրի”**. բողո՛ք մըն է այս աշխարհի ժամանակաւոր իշխանին դէմ՝ հաստատելով որ ինք սատանային քաղաքացին չէ՛ և չ'ուզէր ենթարկուիլ անոր անօրէն ծրագիրներուն և խաբէական արարքներուն:

3. «Զեմ աղաչեր որ զանոնք աշխարհէն վերցնես, այլ՝ որ պահես զանոնք չարէն»--Յով. ԺԷ.15

Ի՞նչ խորախորհուրդ խօսքեր. Յիսուս չ'ուզէր որ հաւատացեալները աշխարհէն վերնան, այլ՝ *չարէ՛ն* պաշտպանուին: Ո՞վ է չարը, եթէ ոչ աշխարհը պատանդ պահող Սատանան:

Ամենափափուկ պարագան կամ հարցը առեւանգուած պատանդ մը ազատելն է: Պատանդ մը ազատելը ոչ միայն ուժի կամ գօրութեան կը կարօտի, այլ՝ *խմտառութեան և ժամանակի*: Աստուած այսպիսի սիրտ մաշեցնող և սիրտ հատցնելիք աշխատութեամբ է, որ կը զբաղի այսօր երկար տարիներ: Ու գաղտնի պահած է այն ժամը՝ երբ վերջին մահացու հարուածը պիտի տայ առեւանգիչ ու մահուան գործադիր Սատանային: Որովհետեւ, այս ճակատամարտը տիեզերքի ճակատագիրը պիտի որոշէ, ու շատ ճգնաժամային ու վճռական ըլլալուն համար, Յիսուս ըսաւ.

«Բայց այդ օրուան ու ժամուն մասին ոչ ոք գիտէ, ո՛չ երկինքի հրեշտակները և ո՛չ ալ Որդին, այլ միայն Հայրը»--Մատթ. ԻԴ.36:

Ուստի, Ո՞վ Հայր Յախտենական, մենք ալ միացնելով մեր ձայնը հազարաւոր երկրպագողներու ձայնին, ու բողոքելով այս աշխարհի իշխանաւորին դէմ, կը խնդրենք.

«Եկեացէ Արքայութիւն Բո. Եղիցին կամք Բո որպէս յերկինս և յերկրի:

ԶՅԱՑ ՄԵՐ ՀԱՆԱՊԱԶՈՐԴ

Յիսուսի հաւատացողներ իրենց հացը այս աշխարհի իշխանէն չեն ուզեր խնդրել, այլ կը խնդրեն իրենց Երկնաւոր չօրմէն:

Ի՞նչու:

Որովհետեւ եթէ այս աշխարհի իշխանէն խնդրեն, պարտաւոր են կատարել նաեւ անոր կամքը, որ է՝ ազահութիւն, խաբէութիւն, ոճիր և ստութիւն: Աստուած եթէ մեծահարուստ չկարենայ դարձնել իրեն աղօթողները, անօթի ալ չի ձգեր զիրենք: Միշտ կերպով մը կը հոգայ: Ճշմարիտ հաւատացեալի մը աղօթքը և խնդրումքը, օրուան անհրաժեշտ համեստ հացն է ու ոչ թէ հարստութիւն, իշխանութիւն կամ փառասիրութիւն:

ՏՈՒՐ ՄԵՋ ԱՅՍՕՐ

Տերունական աղօթքը չ'ըսէր, "իսծի" այլ կ'ըսէ՝ "մեզ":

Երախաները *մեզ* բառը չեն գիտեր, այլ միայն *իւնձի, զիս* կամ *ես* բառերը կը գործածեն: Յիսուս Իր աշակերտներուն նոր դիտանկիւն մը կը շնորհէ՝ զգալու, տեսնելու և հասկնալու: Տեսակետ մը՝ ուր անձը կը նոյնանայ ուրիշ անձի հետ, ուրիշ անձերու մէջ, որպէս ներդաշնակ մեղեդի-ցայգանուագ: Այստեղ՝ անձը իր շահը կը զոհէ ընկերութեան և հաւաքականութեան շահուն համար: Մինչդեռ հիմա, ըստ այս աշխարհի իշխանին ծրագրին, մարդկային ընկերութիւնը իր իրաւունքները կը կորսնցնէ, որպէս զի քանի մը ընչաքաղց և ազահ անձեր աւելի հարստութիւն դիզեն և ասով տեսականացնեն իրենց բունակալական տիրակալութիւնը:

Հաւատացեալի մը աղօթքը *զորաւ'ն* հացին համար է:

Որովհետեւ, Աստուած որ զիս կը հոգայ ու չի լքեր երեսի վրայ, ամէ՛ն օր ալ կը հոգայ: Աստուած միայն Արարիչ մը չէ, այլ նաեւ հոգատա՛ր Խնամակալ Հայր մը միաժամանակ: Այսպիսի հաւատով լեցուն մարդու է որ Աստուած կը հաճի և կ'ուրախանայ:

Ազատ, անկախ և համարձակ ըլլալու միակ պայմանը չ'ամբարելն է: Մարդ որքան քիչ ստացուածք ունենայ, այնքան աւելի ազատ և անկախ կը զգայ ինքզինք: Մարդ ոչ թէ ունեւոր ըլլալու չէ, այլ այդ ունեւորութեան չափազանցուած *տե՛նչք*, մարմաջը ունենալու չէ: Որովհետեւ, կան ունեւորներ՝ որ բան մը

չունեցածի պէս կ'ապրին, և կան չունեւորներ ալ, որ ունենալու տենչէն չեն կրնար ապրիլ: Իրաւ հաւատացեալը պարտի այս հոգեկան անջատումին վարժեցնել իր զգացողութիւնն ու մտածողութիւնը: Այս է ժուժկալութեան առաքինութիւնը, որ կ'արտայայտուի, *"Տուր մեզ այսօր"* տարագով:

ԵՒ ԹՈՂ ՄԵՁ

Յիսուսի գործածած *"Թողութիւն"* բառը շատ խորիմաստ է: "Թողութիւն" բառն է որ Քրիստոնէութիւնը կը զանազանէ ուրիշ կրօններէ: Ուրիշ կրօններու մէջ՝ մեղքի թողութիւնը "Բաւութեամբ" կարելի կ'ըլլայ: Այսինքն՝ մեղքի փոխարէն մեղաւորը պարտ է զոհ մը մատուցանել, մատաղ մը ընել Աստուծոյ: Կարծես թէ Աստուած մատաղի պէտք ունի: Մեղքը պարտ էր *փոխարինելի*: Իսկ Յիսուս երբ հանդիպեցաւ հիւանդ մեղաւորի մը, ըսաւ անոր.

«Արդեա՛կ, բու մեղքերդ ներուած են քեզի, մահիճդ առ ու քալէ»:

Այս է Աստուածային **սիրոյ** կրօնակը, բարի լուրը և ճշմարիտ Աւետարանը, որուն համար Յիսուս երկինքներու բարձրութենէն մինչեւ այս երկիրը եկաւ: Մեղքի կապանքներով խղճահարուող մարդոց՝ տալու մխիթարութիւն, յոյս և թողութիւն մեղաց:

ԶՊԱՏՈՒՄ ՄԵՐ

Մեղաւորի մը կողմէ իր պարտին *խոստովանութիւնը*, ճանաչումը և խղճահարուիլը ինքնին արդէն մատաղ մը և զոհ մը ընել է: Անձի մը համար, իր յանցանքներուն գիտակցութիւնը՝ ինքնին արգել կ'ըլլայ զանոնք կրկնելու: Մարդկային մեղքի գիտակցութիւնը երբ կ'ողողուի Յիսուսի սիրոյ ներումի լոյսով, մարդ իր ներումին ազատագրութեան գիտակցութեամբ կը դառնայ **"նոր մարդ"** և նոր ծնած: Իր կեանքին մէջ կը բացուի նոր էջ, նոր ճամբայ և նոր առիթ մը՝ ապրելու արդարութեամբ, իրաւունքով և սիրով: Անոր՝ որ զինք սիրեց ու թողութիւն շնորհեց իր մեղաց:

Իր յանցանքներուն և մեղքերուն ճանաչումին ու խոստովանութեան չափ մեծ գօրութիւն, վերանորոգման ու վերագինման այլ ազդակ չկա՛յ մարդուն համար: Խոստովանելով մարդ արարած, կը վերածուի իր անթիւ, անհամար ու ծանր պարտերը ամբողջովին

վճարած ազատագրուած էակի մը: Մանր բեռներէ ձերբազատուած մէկու մը: Հաստ ջղթաներէն ֆակուած ու ազատուած բանտարկեալի մը նման:

ՈՐՊԷՍ ԵՒ ՄԵՔ ԹՈՂՈՒՄՔ ՄԵՐՈՅ ՊԱՐՏԱՊԱՆԱՅ

Երանի թէ Իւրաքանչիւր հաւատացեալ՝ անխիղճ պարտատէր ծառային առակը երբեմն կարդայ: Աստուածային սէրը, գլխութիւնը և թողութիւն տալը սֆանջելի կերպով կը պատկերացնէ մեր Տէրը՝ Յիսուս այս առակին մէջ: Ու նաեւ ակնբախ կերպով կը ցուցաբերուի աններող հոգին, կարգ մը թողութիւն ստացած հաւատացեալներու մէջ: Միասին դիտենք այս յաւիտենական անփոփոխ և անյերլի համապատկերին կարգ մը յատկանիշները:

*“Եւ ծառան գետին իյնալով՝ երկրպագութիւն կ’ընէր անոր ու կ’ըսէր--համբերող եղիր ինծի հանդէպ, և ամբողջը կը վճարեմ քեզի--:
Այդ ծառային տէրը, գթալով, արձակեց զայն և պարտքը շնորհեց անոր”:*

Աջխարհի ո՞ր օրէնքին առջեւ գլխութիւն կայ: Ո՞ր պարտատէրը զիջող հոգի ունի, կամ իր պարտապանին շնորհ ընել կը մտածէ:

Ի՞նչ կը ներկայացնէ տասը հազար ֆանֆարը: Իւրաքանչիւր ֆանֆար 45 ֆիլոյ է: Եթէ այս ծանրութիւնը արծաթ կը նշանակէ՝ դու՛ք հաջիւր ըրէք, իսկ եթէ ոսկի՝ չեմ գիտեր ո՞ր դրամատունը ատոր հաջիւր կրնայ ընել:

Կը տեսնե՞ք, թէ մարդկային մեղքը, սխալանքը կամ յանցանքը որքա՞ն անփոխարինելիօրէն մեծ է: Եթէ Աստուած ձրիօրէն թողութիւն չտայ ու ներում չջնրոհէ, մարդ որեւէ կերպով չի կրնար, արիւնով կամ զոհով, ինքզինք անպարտ արձակել:

Մարդ երբ այս անել կացութեան ու իր խղճահարումի տուայտանքներուն մէջ կ’իմանայ Յիսուսի ֆառցը ձայնը, որ իր մեղքերուն թողութիւն կը յայտարարէ, մարդ իսկապէս նորէն՝ նոր կը ծնանի: Ինքզինքը նոր աշխարհ եկած կը զգայ: Դիտենք Յիսուսի գեղանկարին ջարունակութիւնը.

«Իսկ ծառան դուրս ելլելով՝ գտաւ իր ծառայա-

կիցներէն մէկը, որ հարիւր դահեկան պարտք ունէր իրեն: Եւ կոկորդէն բռնելով զայն՝ կը խեղդէր ու կ'ըսէր. վճարէ ինծի, ինչ որ պարտք ես: Եւ զնաց ու բանտ նետել տուաւ զայն, մինչեւ որ պարտքը վճարէր»:

Դժբախտաբար, ահաւասիկ ա՛յս է իրական պատկերը շատ մը թողութիւն ստացած հաւատացեալներու վերաբերմունքը իրարու հանդէպ: Օրինակի համար, այցելենք որեւէ ծխական խորհուրդի մը վարչական ժողովին. փորձի համար ներկայ ըլլանք որեւէ եկեղեցական վարչութեան հաւաքոյթին: Ազգային կամ մշակութային ո՞ր վարչական ժողովին մէջ մարդկային խեղճ կոկորդներ շնչահեղձ կամ խեղդամահ չեն եղած, նիւթական կամ բարոյական պարտքերու մարզին մէջ:

Ի՞նչու այս բոլորը:

Արովհետեւ իր պարտապանը կոկորդէն բռնող հաւատացեալը ի՛ր պարտքին ահաւորութիւնը և զանոնք վճարելու անկարելիութիւնը մոռցած է ու միայն իր "հարիւր դահեկանը" կը յիշէ: Թէեւ հարիւր դահեկանը ի՛ր պարտքին բով զերօ մը անգամ չէ, թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական իմաստով:

Նոյն աններող ոգիի ներկայութիւնն է որ կ'աւերէ ընտանիքները, դրացիները և բարեկամական յարաբերութիւնները: Մենք մոռնալո՛ւ ենք մեր "հարիւր դահեկանը", ըլլալու ենք վեհանձն կամ առատաձեռն, և բանտարկելու ենք մե՛ր ներքին Ես-ը, փոխանակ բանտարկելու մեր պարտապանները:

Ներկայ դարը, որ շատ մը գունաւոր անուններով յորջորջուած է, կրնանք կոչել նաեւ *"ու նեւորութեան դար"*: Անցեալ դարերու մէջ ալ մարդիկ եղած են դրամատէր, ընչասէր և ազահ և նիւթական հարստութիւն ունենալու մարմաջով մղուած. սակայն մեր այս դարաշրջանին մէջ կարծես *ամէ՛ն մարդ*՝ առանց բացառութեան՝ ու նեւորութեան ախտէն վարակուած է: Նիւթական կամ բարոյական իրաւունքէդ կամ յանձնապատասանութենէդ հրաժարիլը, անձնուրացութիւն և անյիշաչարութիւն ցուցաբերելը՝ խենթութիւն կամ տխմարութիւն կը սեպուի: Մարդիկ իրենց իրաւունքին ամենապզտիկ մասնիկն անգամ չեն ուզեր կորսնցնել, զիջիլ զայն իրենց նմաններուն համար:

Իրաւունքն ու սեփականութիւնը կը գերազանցեն **սէրն** ու **բարին**: Մարդոց ամէն շարժումներուն և արարքներուն մղիչ ուժը

կարծես կը բխի *իրենց "ես"* էն կամ իրաւունքէն և կամ սեփականութեան օրինականութենէն: Կը մոռցուին սիրոյ և բարիի կամեցողութիւնները. զանց կ'առնուին բարոյականի, զգացումի գիտակցութեան, տրամաբանութեան և արդարութեան հարցերը՝ որպէս նորոյթէ ինկած, հին դպրոցին պատկանող կամ վիպապաշտական միտումներ: Այս երեւոյթը, ներկայիս, հասարակաց է թէ՛ անհատներու, թէ՛ ընտանիքներու, թէ՛ ժողովուրդի և թէ՛ մանաւանդ պետութեանց մօտ:

Յիսուսի աջակերտներէն Յովհաննէս աւետարանիչ, երբ իր առաքելութեան վախճանի սեմին կայնած ակնարկ մը կը նետէ ետին, տեսնելու համար աստուածային շնորհն ու սքանչելիքները, իրեն անկարելի կը թուի չտեսնել նաեւ չարին դաւադրութիւնները, ու սապէս կը գրէ իր նամակին վերջաւորութեան.

**«Գիտենք որ մենք Աստուծմէ ենք, և ամբողջ
աշխարհ չարի մէջ է»--Ա. Յով. Ե.19:**

Բոլոր անոնք, որ իրենք զիրենք "Աստուծմէ ըլլալ" կը կարծեն, այս չար--Մատանայի--իջխանութեամբ կառավարուող աշխարհի բարոյականովն ու կանոններովը պէտք է շարժին կամ տրամաբանեն: Իրենց տրամաբանութեան վերջակէտը պէտք է ըլլայ սա հարցումը, թէ իրենց ըրածը *բարի՞ է թէ՛ չար*, աստուածահաճոյ՞ է, կառուցողակա՞ն է թէ՛ քանդիչ. թէ օրինաւո՞ր է կամ իրաւա՞ցի: Անձնութեան և *զոհաբերութեան* ոգին ունեցողն է որ կրնայ ինքզինքը *"Աստուծմէ ենք"* յայտարարել:

ԵՒ ՄԻ՛ ՏԱՆԻՐ ԶՄԵՋ ԴՒ ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

"Մի՛ տանիր զմեզ" բառերը այն տպաւորութիւնը կը թողուն, որ Աստուած Ի՛նք մարդը փորձութեան կը տանի: Այս մտայնութիւնը աւելի կը զօրանայ մեր մէջ երբ կը կարդանք Յիսուսի փորձութեան մասին, որ գրուած է Եբրայեցիս նամակին մէջ.

**«Բանի որ ունինք Բահանայապետ մը՝ որ մեզի նման
փորձուած է ամէն բանի մէջ, բայց առանց մեղքի է»
--Դ.15:**

Աստուծոյ Հոգին Յիսուսը ոչ թէ

փորձելո՛ւ համար

անապատ տարաւ, այլ Իր առաքելութեան ընդհանուր ծրագիրը *մշակելու՛ն* և Իր Հօրը հետ խորհրդածելու՛ն համար: Մակայն, որովհետեւ այս բոլորը տեղի կ'ունենան ա՛յս աշխարհի իշխանին տիրապետութեան շրջանին՝ Սատանան ի՛նք այս փառասուն օրուան շրջանը առիթ գործածելով փորձի ենթարկեց Յիսուսը: Մանաւանդ երբ Յիսուս մարմնապէս տկար էր ու վտիտ՝ հիւծած: Այսուհանդերձ, մեր Տէրը որպէս անպարտելի՝ յաղթական դուրս եկաւ այս մենամարտէն:

Գալով ***“Եւ մի տանիր զմեզ”*** բառերուն, Աստուածաշունչի Յունարէն բնագրի հարուստ լեզուն կու տայ նաեւ սա շատ գեղեցիկ բանաձեւը. ***“Եւ մի՛ լքեր զմեզ ՚ի փորձութիւն”***: *Լքել* որ հայերէնի մէջ նաեւ կը նշանակէ՝ *թողուլ, հեռանալ, երեսի վրայ ձգել* կամ *անօգնական թողուլ*, շատ պատշաճ յարմարութիւն կ'առնէ Յիսուսի հոգիին և հրահանգ-պատուէրներուն համեմատ:

Նոր Կտակարանի, նոր աշխարհաբար թարգմանութիւնը, կատարուեցաւ Անթիլիասի հովանաւորութեամբ ու հրատարակուեցաւ 1993-ին: Այս նոր թարգմանութեան մէջ վերոյիշեալ հասուածը կը կարդանք սապէս.

“Եւ թող մի՛ տար (այսինքն մի՛ լքեր) որ փորձութեան մէջ իյնանք”--Մատթ. 2.13:

Հաւատացեալ մը՝ երբ յաւակնտութիւն ու հպարտութիւն կ'ունենայ և կ'ուզէ գործել ինքնիշխան կերպով, առանց Աստուծոյ օժանդակութիւնը խնդրելու, կրնայ իյնալ փորձութեան մէջ ու նաեւ մեղանչել: Երբ կարդանք *“Հաւատով Խոստովանիմ”*ը կամ *Նարեկացիի աղօթքները*, հոն կը տեսնենք, որ այս տիտան սուրբերը երբեք յաւակնտութիւն չեն ցուցներ իրենց կեանքին ու գործերուն ընթացքին: Որովհետեւ, այս սուրբերը շատ լաւ գիտէն այս աշխարհի իշխան Բելիարին վարմին ցանցերը ու խաբէութիւնները, որոնք կարող են զիրենք տապալել եթէ Հայր Աստուած զիրենք չքոնէ և իրենց նեցուկ չհանդիսանայ:

Ուստի, հաւատացեալ մը՝ որքան ալ ինքզինքը զօրաւոր զգայ, որովհետեւ **օտար** հողի վրայ կ'ապրի, իր խնդրանքը ըլլալու է՝ ***“Եւ մի՛ լքեր զմեզ ՚ի փորձութիւն”***. Այլ՝

ՓՐԿԵԱ ԶՄԵՋ ՚Ի ԶԱՐԷ

Չարը մեզի վախ ազդելու չէ, այլ մեզ արթուն և զգուշաւոր դարձնելու է՝ իր բազմատեսակ որոգայթներովը: Ամենէն աւելի

զգուշանալու ենք *հայարարութենէ՛* և *կեղծաւորութենէ՛*: Այս երկու մեղքերը ամենակործանարար արդիւնքը տուած են թէ՛ հաւատացեալներու անհատակա՛ն կեանքին և թէ՛ եկեղեցական կեանքին մէջ: Երբ կարդանք Եկեղեցական Պատմութիւնը, որ երկու հազար տարուայ շրջան մը կը բոլորէ, ամենամեծ հարուածը և կոտորածը այս վերոյիշեալ երկու մեղքերուն պատճառաւ եղած կը գտնենք:

Երբեք չմոռնանք, որ Աստուծոյ հակառակորդը, բանսարկուն և հաւատացեալներու **ոսո՛խը՝** Սատանան, *«Կը մոնջէ առիւծի նման, կը ջրջի և կը փնտռէ թէ՛ զո՞վ կլլէ»* -- Ա. Պետ. Ե. 8:

Որովհետեւ առեւանգուած պատանդներ ենք՝ Սատանային իշխանութեան ներքեւ, այս աղօթքը առ Աստուած՝ կ'ապացուցանէ մեր հաւատարմութիւնը տիեզերքի Արարիչ ու Տէր Աստուծոյ, թէ մենք Իրեն հանդէպ դասալիք չենք և անձնատուր եղած չենք մեզ գերող բռնակալին:

Եթէ դիտենք այս հարցը հոգեկան տեսակէտէն, մենք՝ որ մարմնաւոր ենք և հողեղէն, և որուն շնորհուած է վերելք մը նիւթեղէնէն դէպի լուսեղէնը, կ'աղերսենք, որ, ինչպէս որ հասեր ենք զգացական, բանական և տրամաբանական ըլլալու, հասնինք նաեւ մինչեւ **ՆՄԱՆՆ ԸԼԼԱԼՈՒ** Տիտուսի՝ մեր Տիրոջ:

«Որովհետեւ զանոնք որ նախապէս կը ճանչնար՝ նախասահմանեց կերպարանակից ըլլալու Իր Որդւոյն պատկերին» -- Հռով. Ը. 29:

Հետեւաբար, մեր փրկութիւնը իր լրումը պիտի գտնէ միայն այն տեսն, երբ, այս մարմնեղէն ու հողեղէն իրականութիւնը՝ չարի ձգողական զօրութենէն բոլորովին անջատուած, Բարիի ձգողական զօրութեամբը կամենայ ու դաւանի Բարին, Արդարը և Ճշմարիտը:

ՋԻ ՔՈՒ Է ԱՐՔԱՅՈՒԿԹԻՒՆ

Ի՛նչ մեծ Բաջութիւն կը պահանջէ, որ անձ մը՝ կանգնած թշնամի հողին վրայ, իր մայր հայրենիքին Բայլերգը երգէ: Վերի փառաբանութիւնը Բայլե՛րգն է բոլոր հաւատացեալներուն: Ասիկա կաջառուած և կեղծ փառաբանութիւն մը չէ՛ առ Աստուած: Ասիկա սրտաբուխ ու ճշմարիտ փառաբանութիւն մըն է, բիւրաւոր վկաներու ու գլխատուածներու: Փառաբանութիւ՛նն է, Բաջերու, որոնք հակառակ իրենց պարտադրուած տանջանքներուն ու զրկանքներուն, հաւատարիմ մնացած են իրենց արմատին, իրենց երկնաւոր Հօր և

Փրկչին:

Ասոնք այն **Նրանելիներն**՝ են, որ թեպետև աչքով չեն տեսած Յարուգեալ Տէրը, սակայն կը հաւատան Անոր: Ասոնք իրազաւակներն են այն եկեղեցիին, որ դարեր շարունակ պահած է Յիսուսի հաւատքը աննահանջ, առանց ընկրկելու հուրի և սուրի առջեւ, անտրտունջ սուած են իրենց պարանոցը, իրենց կալուածը, իրենց արծաթն ու ոսկին, բայց ո՛չ երբե՛ք իրենց հաւատքը կամ Յիսուսը:

Թէեւ, իրենց հայրենի հողերուն վրայ, իրենց անցեալին քարեղէն եկեղեցիներուն աւերակները միայն կ'երեւին, որ թշնամիին հարուածներուն տակ կը շարունակեն դեռ աւերուիլ, փշրուիլ ու քանդուիլ, բայց իրենց սրտին ու մտքին մէջ հաւատքի իրենց տաճարը տակաւին կը մնայ կանգուն, անխորտակելի և յաղթական: Անխախտ է և անսասան՝ իրենց այս հաւատքը, թէեւ որոշ չափով կորսնցուցած իր առոյգ ճկունութիւնը և բոցազեղ խանդավառութիւնը: Վիճական և հիմնական այս հաւատքն ու սէրը առ Աստուած զիրենք կը դասէ հաւատացեալներու խումբին:

Յախտենական Կեանքը՝ այս խումբին է խոստացուած ... :

ԵՒ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՌՔ ՅԱՒՏԵԱՆՍ: ԱՄԷՆ

Հանդիպա՞ծ էք որեւէ ողբերգութեան: Հիւանդութիւն մը այցելա՞ծ է ձեզի: Կամ մահը մօտեցա՞ծ է ձեզի, երբեւէ: Նայեցէ՛ք Յիսուսի, ունկնդրեցէ՛ք միլիոնաւոր վկաներու բացազանջութիւնները և փառաբանութիւնները, ամէն ազգերէ ու ամէն լեզուներէ: Ու միացէ՛ք անոնց:

Եթէ հանդիպած էք անյաղթահարելի դժուարութեանց, նայեցէ՛ք դարձեալ Յիսուսի՝ որպէս Տիպար, Անպարտելի Ախոյան: Նայեցէ՛ք ձեր հոգիին պայծառ աչքերովը:

Եթէ ձեր հոգին լեցուած է ուրախութեամբ ու ցնծութեամբ, կրկի՛ն նայեցէ՛ք Յիսուսի, որ լուսեղէն Զուարթութիւն է, ու միացուցէ՛ք ձեր ուրախութիւնը անոնց՝ որոնք կ'երգեն այս քայլերգը յաղթութեան ու փառաբանութեան **ՔԱՅԼԵՐԳԸ**

Դեկտեմբեր 30, 1986

Թորոնթօ